ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ, ԻՐ ԾՆՆԴՅԱՆ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԻՆ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ, հայեցարուք յելս գնացից նոցա, նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 7):

«Հիշեցեք ձեր առաջնորդներին, որոնք ձեզ Աստուծո խոսքն ասացին: Նայելով նրանց ընթացքին, հետևող եղեք նրանց հավատքին»:

Քսան և չորս տարիներ առաջ, 1954-ին, մայիսյան մի առավոտյան, իր աչքերը հավետ փակելուց առաջ, լուսաբնակ Մեր նախորդ Հայրապետ Տ. Գեորգ Զ կաթողիկոս, Իր մոտ էր հրավիրել Մայր Աթոռի փոքրաթիվ երիտասարդ միաբաններին, Իր վերջին օրհնությունը տալու: Նրա վերջին խոսքն էր եղել՝ «Հավատարիմ մնացեք ձեր ուխտին, մեղք է սուրբ Էջմիածինը»: Տարիներ անց, լսելով այդ մասին, Մեզ այնպես թվաց, թե ծերունազարդ Հայրապետի այդ կոչը Մեզ էր ուղղված: **«Մեղք է ս. Էջմիածինը»:** Այդ զգացումով է, որ Մենք խոնարհվեցինք Աստուծո և մեր ժողովրդի կամքի առաջ և Մեր տկար ուսերի վրա վերցրինք ծանր լուծը հայոց եկեղեցու սպասավորության, սուրբ Լուսավորչի գահի վրա: Այդ օրից անցել են քսաներեք տարիներ, տարիներ լարված աշխատանքի, տարիներ բազում տեսակի դժվարությունների, խարխափումների, երբեմն նույնիսկ դառնությունների ու երկյուղների, բայց և տարիներ շինարար իրագործումների, հաջողությունների և մեծ ուրախությունների: Անցնող այս տարիների ամբողջ ընթացքում Մենք հետևել ենք Պողոս առաքյալի պատգամին, երկյուղածությամբ հիշել ենք Մեր նախորդներին և փորձել ենք տքնել, նմանող լինել նրանց ընթացքին: Մենք երբեք Մենք չենք եղել, այլ եղել ենք Մեզ նախորդող հարյուր և քսանինը Հայրապետների հետ միասին: Ամեն անգամ, երբ գտնվել ենք կարևոր մի հարցի առաջ, Մեր հոգու հայացքը ուղղել ենք դեպի Մեզ նախորդող Հայրապետները և Մեր որոշումները տվել ենք նրանց հետ միասին: Եվ ահը պատել է Մեր սիրտը, երբ տարակուսել ենք, թե արդյոք շեղվո՞ւմ ենք այդ ճանապարհից: Եվ եթե մի արժանիք պետք է վերագրել Մեզ, մխիթարված ու հպարտ պիտի լինեինք հաստատելով, թե Մեր երազանք-

ներով, Մեր աշխատանքի եռանդով, Մեր շրջանին կատարված իրագործումներով հավատարիմ ենք մնացել մեր լուսաբնակ հայրապետներին և հետևել ենք նրանց կյանքի ու գործի ընթացքին, նրանց, որոնք մոտ տասնյոթ դարեր շարունակ անսասան ու անաղարտ են պահել լույս հավատքը մեր նախնյաց և մայր եկեղեցին հայկական, և Մեզ այսօրվաններիս են հանձնել դրանք իբրև հայ ժողովրդի ոգեկանության մեծագույն ժառանգություն: Բոլոր կարևոր հարցերում Մենք միշտ ճիգ ենք ի գործ դրել չշեղվելու ոգեկան այդ ժառանգությունից:

Այդ ոգով և այդ գիտակցությամբ ենք ապրել, մտածել ու գործել տևապես:

Նյութական վերաշինություն և բարեկարգում սուրբ Էջմիածնի, Հայաստանի վանքերի ու եկեղեցիների, դաստիարակում հոգևորական նոր սերունդների հոգևոր ու ազգային առաքելության գիտակցությամբ, մայր հայրենիքի և սփյուռքի հայության միասնության կենսագործում սուրբ Էջմիածնի օրհնությամբ, Մայր Աթոռիս գործոն մասնակցությունը խաղաղության միջազգային շարժման, հայ եկեղեցու կողմնորոշում էկումենիկ միջեկեղեցական հարաբերություններում և, վերջապես, Մեր անդուլ ջանքերը բնականոն դարձնելու Մայր Աթոռիս և Անթիլիասի Կիլիկյան Աթոռի հարաբերությունները օրինականության և ներքին միության վերահաստատումով, ահա իրագործումներ և հարցեր, որոնց քննարկման ու զարգացման ճանապարհին Մենք առաջնորդվել ենք մեր լուսաբնակ մեծ Հայրապետների հավատքով, երազանքներով ու կյանքի օրինակով:

Թե մեր հայրապետության քսաներեք տարիների ընթացքում ինչքանով կարողացանք արդարացնել մեր եկեղեցու և ժողովրդի վստահությունը և սպասումները, այդ թողնում ենք ձեր և ապագա սերունդների գնահատմանը:

Մեր կյանքի յոթանասուն տարիների սեմին աղոթում ենք, որ Տերը տակավին բավարար ժամանակ ընծայի Մեզ, իրենց լրումին հասցնելու համար Մեր ծրագրերը:

Այսօր, երբ դուք շրջապատել եք Մեզ այսքան սիրով, այսքան քաղցր արտահայտություններով, Մեր սիրտը լեցուն անհուն երախտագիտությամբ, շնորհակալություն ենք հայտնում բոլորիդ: Շնորհակալություն մեր հոգևոր բոլոր եղբայրներին՝ Երուսաղեմի և Կ. Պոլսի Աթոռների ամենապատիվ պատրիարքներին, սրբազան արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին և վարդապետներին, Գերագույն հոգևոր խորհրդի հարգարժան անդամներին, որոնք Մեր հայրապետության ամբողջ շրջանին Մեր թանկագին գործակիցները հանդիսացան նվիրումով և հավատարմությամբ: Մեր խորագույն շնորհակալությունն ենք ուզում հայտնել ռուսաց պրավոսլավ եկեղեցու հովվապետ Նորին Սրբություն Պիմեն Սրբազան Պատրիարքին, նրա տևապես եղբայրական և բարեկամական վերաբերումին համար դեպի մեր եկեղեցին և Մեր անձը: Թող Աստված օրհնի Հայաստանյաց առաքելական եկեղեցու և ռուս պրավոսլավ մեծ եկեղեցու սիրո և եղբայրական գործակցության հարաբերությունները:

Այս հանդիսավոր պահին Մենք խոր հուզումով ջերմ շնորհակալություն ենք հայտնում Սովետական Միության բարձրագույն իշխանության կողմից Մեզ շնորհված «Ժողովուրդների բարեկամության» շքանշանի համար, որ Մենք պատիվ ունեցանք ընդունելու Սովետական Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահի ձեռամբ, սեպտեմբերի 27-ին, Գերագույն սովետի պալատում: Մենք համակված ենք այն քաղցր ապրումով, թե այս

մեծ պարգևը Մեր անձի միջոցով շնորհվում է Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, մեր եկեղեցուն, որի խոնարհ առաջին սպասավորն ենք Մենք: Այս պարգևատրումը Մեզ ավելի է գոտեպնդում և ավելի պարտավորեցնում շարունակելու Մեր և մեր եկեղեցու միահամուռ ջանքերը՝ ի պաշտպանություն աշխարհի խաղաղության արդար դատի և ժողովուրդների բարեկամության համամարդկային վեհ իդեալի:

Թույլ տվեք նույն անխառն զգացումներով շնորհակալություն հայտնել Սովետական Միության կենտրոնական կառավարությանն առընթեր և Սովետական Հայաստանի կառավարությանն առընթեր կրոնից գործերի կոմիտեների հարգարժան ներկայացուցիչներին և այստեղ խոսք առնող հայ եկեղեցու մեր հոգևոր եղբայրներին, վրացական քույր եկեղեցու պատվիրակության, սուրբ Ղազարի Մխիթարյան միաբանության և հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչներին և բոլոր այն մեծահարգ անձնավորություններին, որոնք ներկայացնում են մեր երկրի հասարակական և գիտական բարձրագույն կազմակերպությունները ու հաստատությունները:

Մեր հայրապետական գործունեության շրջանին Մայր Աթոռիս բոլոր շինարարական իրագործումները հնարավոր դարձան նաև շնորհիվ մեր եկեղեցու այն հավատացյալ զավակների, որոնք անսակարկ և ինքնաբուխ կերպով նյութական կարևոր միջոցներ տրամադրեցին:

Մայր Աթոռս ունեցավ այսպիսի ավելի քան քառասուն մեծահոգի բարերարներ, որոնց գլուխն է հանդիսանում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը: Այս հանդիսավոր պահին Մեր սեպուհ պարտքն ենք նկատում Մեր ամենաջերմ շնորհակալության խոսքն ու օրհնությունը ուղղել Մայր Աթոռ ս. Էջմիածնի բոլոր բարերարներին:

Այսօր պարտավոր ենք նաև Մեր սրտագին գոհունակության խոսքը ուղղել Մեր միաբանության նվիրյալ անդամներին, Մայր Աթոռիս առընթեր ճարտարապետների և արվեստագետների և իրավագիտական հանձնախմբերի անդամներին, հոգևոր ճեմարանի տեսչության ու դասախոսներին, «Էջմիածին» ամսագրի խմբագրության, Մայր Աթոռիս շինարարական, տնտեսական ու ֆինանսական բաժինների ղեկավարներին, Մայր Աթոռիս այլ բաժինների վարիչներին, ողջ պաշտոնեության, արհեստավորներին և բանվորներին ու ծառայողներին, որոնք տևապես իրենց աշխատանքի բաժինը բերեցին ազնվությամբ ու ջանասիրությամբ ս. Էջմիածնի պայծառության համար:

Բոլորին, բոլորիդ կրկին ու կրկին խորազգաց շնորհակալություններ և օրհնություններ:

Մեր կյանքի յոթանասուն տարիների սեմին և Մեր հայրապետական գործունեության քսաներեքորդ տարվա սկզբնավորության, Մենք Մեր հոգու հայացքը բարձրացնում ենք դեպի երկինք, աղոթելով սաղմոսերգուի հուր խոսքերով՝

«Զճանապարհս քո Տէր ցոյց ինձ և զշաւիղս քո ուսո ինձ. առաջնորդեա ինձ ի ճշմարտութեան քում և ուսո զիս, զի դու ես Աստուած փրկիչ իմ և ես քեզ համբերի զօրհանապազ» (Սաղմոս 24, 4—6). ամեն: